ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1390

28.11.2013թվ.

ՀՀ ոստիկանության պետ,

գեներալ-լեյտենանտ

պարոն. Վ. Գասպարյանին

Հարգելի պարոն Գասպարյան,

Նորիկ Ավետիսի Մկրտչյանը ձերբակալվել է 31.10.2013թ-ին ժամը 23^{50}, սակայն ՀՀ ոստիկանության Արագածոտնի ՄՎ Թալինի ՀՊՎ է ընդունվել 01.11.2013թ-ին ժամը 17^{30}:

Խնդրում ենք ուսումնասիրել ներկայացված փաստը և Դիտորդական խմբին մեկնաբանել, թե 17 ժամ 40 րոպե Ն. Մկրտչյանը որտեղ է գտնվել, որի արդյունքում նա չի կարողացել օգտվել ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ձերբակալվածի իրավունքներից:

ՀՀ ոստիկանության համակարգ
մուտք թիվ 5076
02 12 13

Հարգանքներով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝

<< Ոստիկանության գլխավոր տնօրինություն
մուտք թիվ 8125
02 12 2013թ.

Հ. Սահակյան

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա
Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
www.policemonitoring.org
E-mail: info@policemonitoring.org

375025, ք. Երևան, Նալբանդյան 130 հեռ. 59-65-94

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

N- 2/2-1-_____ «_____»_____ 2013թ.

Ձեր՝ 28.11.2013թ. թիվ 2621/1390 գր.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի նախագահ Հասմիկ Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

Ձեր 28.11.2013թ. 2621/1390 գրությունը քննարկվել է ՀՀ ոստիկանության շտաբում, քննչական գլխավոր և Արագածոտնի մարզային վարչություններում:

ՀՀ ոստիկանության ՔԳՎ Արագածոտնի մարզային քննչական բաժնի Թալինի քննչական խմբում 28.12.2011թ. ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով հարուցված քրեական գործով մեղադրյալ Նորիկ Ավետիսի Մկրտչյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը, հայտարարվել հետախուզում և նշված քրեական գործի վարույթը 17.04.2012թ. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով կասեցվել է:

31.10.2013թ. ժամը 23:40-ին ոստիկանության Արմավիրի բաժնի ծառայողները <<Զվարթնոց>> օդանավակայանի ժամանման սրահից Ն.Մկրտչյանին բերման են ենթարկել ոստիկանության Արմավիրի բաժին, որտեղ նույն օրը վերջինս ձերբակալվել է:

01.11.2013թ. ժամը 17:30-ին Ն.Մկրտչյանը ոստիկանության Արմավիրի բաժնի ՁՊՎ-ից տեղափոխվել և ընդունվել է ոստիկանության Թալինի բաժնի ՁՊՎ:

02.11.2013թ. ժամը 18:55-ին, Թալինի քննչական խմբի ավագ քննիչ Ա.Պետրոսյանի որոշման համաձայն, մեղադրյալ Ն.Մկրտչյանի նկատմամբ խափանման միջոց է ընտրվել ստորագրություն չհեռանալու մասին, որի հիման վրա վերջինս ազատ է արձակվել ոստիկանության Թալինի բաժնի ՁՊՎ-ից:

Ն.Մկրտչյանը օգտվել է ՀՀ օրենսդրությամբ նախատեսված իր իրավունքներից, վերջինիս իրավունքները չեն խախտվել, իսկ ոստիկանության ծառայողների գործողություններն եղել են իրավաչափ:

ՀՀ ոստիկանության շտաբ